ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՐԱՄԱՆ

«07» «դեկտեմբերի» 2021 թ. № 477-Լ

ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 23-Ի N 92-Լ ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» 33-րդ հոդվածով, վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 745-Լ որոշման հավելվածի 18-րդ կետի 20-րդ ենթակետով.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1.Բնապահպանության նախարարի 2019 թվականի ապրիլի 23-ի «Շրջակա միջավայրի նախարարության ներքին կարգապահական կանոնները հաստատելու մասին» N 92-Լ հրամանում կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) հրամանի 64-րդ, 65-րդ և 66-րդ կետերը շարադրել նոր խմբագրությամբ

«64. Նախարարության աշխատողներն առողջապահության նախարարի 2021 թվականի դեկտեմբերի 1-ի N 84-Ն հրամանն ուժի մեջ մտնելուց հետո յուրաքանչյուր 7 օրը մեկ Մարդկային ռեսուրսների կառավարման բաժին են ներկայացնում կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) ախտորոշման պոլիմերազային շղթայական ռեակցիայի հետազոտության (այսուհետ՝ ՊՇՌ հետազոտություն) բացասական արդյունքը հավաստող առավելագույնը 72 ժամ վաղեմության, առողջապահության նախարարի 2020 թվականի օգոստոսի 10-ի N 2688-Լ հրամանով սահմանված սերտիֆիկատ (այսուհետ՝ սերտիֆիկատ), բացառությամբ ամբողջական պատվաստված, մեկ դեղաչափ պատվաստված, փաստագրված բացարձակ հակացուցում ունեցող աշխատողների, հղիների, մինչև 18 տարեկան աշխատողների, ինչպես նաև նախկինում կորոնավիրուսային հիվանդությամբ (COVID-19) հիվանդացած աշխատողների՝ ՊՇՌ հետազոտության առաջին դրական արդյունքից հաշված 90 օրվա ընթացքում:

Եթե աշխատակիցը գտնվում է 7 օրը գերազանցող արձակուրդում, ապա ՊՇՌ հետազոտության սերտիֆիկատը ներկայացնում է աշխատանքի ներկայանալու օրը:

ՊՇՌ հետազոտությունն իրականացնում է աշխատողն՝ սեփական միջոցներով:

65. Կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) դեմ ամբողջական պատվաստված աշխատողը Մարդկային ռեսուրսների կառավարման բաժին է ներկայացնում է տվյալ պատվաստանյութի կիրառման հրահանգի համաձայն սահմանված դեղաչափերով (դեղաչափով) ամբողջական պատվաստումը

հավաստող առողջապահության նախարարի 2021 թվականի մայիսի 27-ի N 2020-Լ հրամանով սահմանված սերտիֆիկատ (տեղեկանք) (այսուհետ՝ պատվաստման սերտիֆիկատ), ինչը գրանցվում է համապատասխան գրանցամատյանում և պատճենը կցվում է աշխատողի անձնական գործին: Առաջին և երկրորդ դեղաչափերի միջև կոնկրետ պատվաստանյութի համար սահմանված ժամանակամիջոցում ամբողջական պատվաստում չունեցող աշխատողը չի ներկայացնում ՊՇՌ հետազոտության բացասական արդյունքը հավաստող առավելագույնը 72 ժամ վաղեմության սերտիֆիկատ:

Կոնկրետ պատվաստանյութի համար դեղաչափերի միջև սահմանված ինտերվալի առավելագույն ժամկետից ավել ժամանակամիջոցի դեպքում երկրորդ դեղաչափը չստացած և բացարձակ հակացուցում չունեցող աշխատողը ներկայացնում է ՊՇՌ հետազոտության բացասական արդյունքը հավաստող առավելագույնը 72 ժամ վաղեմության սերտիֆիկատ՝ համաձայն 64-րդ կետի պահանջի:

66. Առողջապահության նախարարի 2020 թվականի օգոստոսի 4-ի N 17-Ն հրամանով սահմանված պատվաստվելու բացարձակ հակացուցումներ ունեցող աշխատողները Մարդկային ռեսուրսների կառավարման բաժին են ներկայացնում կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) պատվաստման բացարձակ հակացուցումների մասին բժշկական փաստաթուղթ, հղիները՝ հղիության մասին բժշկական փաստաթուղթ՝ տրված առողջության առաջնային պահպանման բժշկի կողմից, համաձայն Առողջապահության նախարարի 2013 թվականի հուլիսի 3-ի թիվ 35-Ն հրամանի պահանջների, իսկ կորոնավիրուսային հիվանդությամբ (COVID-19) հիվանդացած անձինք (ՊՇՌ հետազոտության առաջին դրական արդյունքից հաշված 90 օրվա ընթացքում) կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) ախտորոշման ՊՇՌ հետազոտության առաջին դրական արդյունքը հավաստող սերտիֆիկատ՝ արտածված Էլեկտրոնային առողջապահության միասնական տեղեկատվական ԱՐՄԵԴ համակարգից, իսկ մինչև 18 տարեկան անձանց դեպքում՝ անձը հաստատող փաստաթուղթ:»

ՆԱԽԱՐԱՐ Ռ.ՊԵՏՐՈՍՅԱՆ

12/7/2021

X

ՌՈՄԱՆՈՍ ՊԵՏՐՈՍՅԱՆ

Signed by: PETROSYAN ROMANOS 3608790012

«07» դեկտեմբերի 2021թ.
ք. Երևան